

**Հայ-Ռուսական Համալսարանի հարգարժան կոլեգաներ,  
Հարգելի հյուրեր,  
Միրելի ուսանողներ,**

Արդեն ավանդաբար, տարվա վերջին ամսում մենք ամփոփում ենք մեր գիտական նվաճումները, միմյանց և հանրությանն ենք ներկայացնում մեր հետազոտությունների հիմնական արդյունքները, նախանշում Համալսարանի գիտական զարգացման հետագա քայլերը:

Այս տարվա գիտաժողովը կարելի է համարել ինչ որ չափով շրջադարձային. Մենք բոլորեցինք մեր կազմավորման տասնհինգ տարին՝ ձեռքբերումներում ունենալով երկրի կրթական, գիտական և մշաքութա-քաղաքակրթական դաշտում մեր ուրույն, ոչ մեկին չնմանվող, ոչ մեկին չկրկնակող, ամուր ու հաստատուն տեղը, սեփական հզոր գիտական դպրոցները, յուրաքանչյուր գիտական կոլեկտիվի համար պատիվ բերող գիտնականների ստվար հանրությունը, և վերջապես, պատվախնդիր, գիտական վերելքների ձգտող լավագույն երիտասարդությունը:

Քանի որ մեր գիտաժողովը նվիրված է Համալսարանի կազմավորման 15-ամյակին, իմ այսօրվա զեկույցը սևեռված կլինի համալսարանական մշակույթի այն նոր նրբերանգներին, որոնք ամրագրվեցին Հայաստանյան համալսարանական դաշտում մեր ձևավորման և գործունեության փաստով: Մենք իսկապես գործունեության այս նվազագույն ժամանակահատվածում մի շարք ասպարեզներում հայտնվեցինք երկրում բարձրագույն կրթության առաջատարների շարքում, և կարողացանք դառնալ համալսարանական նոր մշակույթ ձևավորող կրթական, գիտական և քաղաքակրթական օջախ:

Մեր այս տասնհինգ տարում կառանձնացնեի երեք շրջադարձային կետ, որոնց իրագործումը մեզանից պահանջեց առավելագույն հեռատեսություն և հետևողականություն. Առաջինը դա բնագիտական ուղղությունները զարգացնելու 2003 թվականի մեր որոշումն էր և դրան հաջորդած գործողությունները, որոնք հանգուցալուծվեցին, ֆիզիկատեխնիկական, նանոէլեկտրոնիկայի, միկրոէլեկտրոնիկայի, բժշկական կենսաքիմիայի, հետազայում նաև Հայաստանում եզակի բնութ կրող բիոինժեներիայի և բիոինֆորմատիկայի ֆակուլտետների և

ուղղությունների բացումով, ինչպես նաև կիրառական և ֆունդամենտալ մաթեմատիկայի ուղղությունների հետագա զարգացումով:

Այս մտտեցումը շրջադարձային էր, քանի որ կազմավորման փուլում Համալսարանը նախագծվել էր որպես հիմնականում հումանիտար և հատկապես՝ լեզվաբանական ուղղությունների մեջ մասնագիտացված ուսումնական հաստատություն: Բնագիտական ուղղությունների հաջող ընթացքը մեր ժամանակների համար եզակի մի իրավիճակի բերեց. Տնտեսագետների և իրավաբանների այս չարաբաստիկ դարում մենք ձևավորեցինք երկրի համար չափազանց կարևոր մի տենդենց. Անդրադարձ դեպի բնական գիտություններ, դրանց կիրառական նշանակություն և ապացուցեցինք, որ Հայաստանում Գիտության դարաշրջանը ոչ միայն չի ավարտվել, այլ հակառակը՝ ՆՈՐ Է ՄԿՄՎՈՒՄ: Առանց բնական գիտությունների, առանց Գիտության ընդհանրապես և ոչ մի տեղում չի կարող լինել լիարժեք համալսարան:

Ես շնորհակալ եմ մեր գիտության ռահվիրաներին՝ ակադեմիկոս Էդվարդ Ղազարյանին, պրոֆեսորներ Հրաչ Վարդապետյանին, Հայկ Սարգսյանին, Վլադիմիր Եղիազարյանին, Գարնիկ Կարապետյանին, Գևորգ Դանագուլյանին, շատ ու շատ ուրիշներին՝ իմ այս տեսլականը կիսելու և բնագիտական ուղղությունները առաջնորդելու համար: Մեր շրջանավարտները այսօր պատվով են տանում գիտության առաջնորդների իրենց առաքելությունը համաշխարհային ճանաչում ունեցող այնպիսի կենտրոններում ու համալսարաններում, ինչպիսիք են, օրինակ, Օքսֆորդի համալսարանը կամ Մասսաչուսեթսի Տեխնոլոգիական Ինստիտուտը: Այսինքն՝ հանդգնելով գրեթե անհանար պայմաններում զարգացնել բնագիտական ոլորտը, մենք ոչ միայն խթանեցինք երկրում դրա նկատմամբ հետաքրքրության աճը, այլև կարողացանք ձևավորել համաշխարհային ամենաբարձր չափանիշներին համապատասխանող կրթական և գիտական գործընթաց:

Հումանիտար ուղղությունների իմ հարգարժան գործընկերները կարող է իրենց մի փոքր նեղված զգան՝ իմ կողմից այսօր հատուկ չնշվելու պատճառով, բայց կրկնեմ. Համալսարանը հենց առաջին օրվանից ենթադրվում էր որպես հումանիտար, և մասնավորապես, լեզվագիտական կենտրոն, և ուրեմն՝ մեր նվաճումները այս ոլորտներում (որոնք ևս քիչ չեն) կարելի էր ծրագրավորել և նույնիսկ բնականոն համարել: Այնպես որ սահմանափակվեմ միայն նշելով պրոֆեսորներ Ազատ Եղիազարյանի, Էդվարդ Սանդոյանի, Ստեփան Ծաղիկյանի,

Լիլիթ Մելիքսեթյանի, Կառլեն Միրումյանի, բազմաթիվ այլոց որոշիչ ավանդը:

Իսկ բնագիտական ուղղություններում մեր հաջողությունները ոչ միայն սպասելի չէին, այլև հակառակ էին բոլոր օրինաչափություններին: Եվ հենց այս իմաստով է, որ ես ընդգծում եմ բնագիտական ուղղություններ բացելու և համալսարանական գիտությունը զարգացնելու մեր 2003 թվականի որոշումը որպես շրջադարձային:

Մրան հաջորդեցին ակադեմիական առաջավոր ինստիտուտներում բազային ամբիոններ բացելու մեր որոշումները, որոնք նոր խոսք էին երկրի համալսարանական կյանքում և միտված էին առավելագույնս մերձեցնել համալսարանական և ակադեմիական գիտությունը՝ դրան սիներգետիկ ուժ և նոր հզորություն հաղորդելով: Մշտապես եղել եմ այն համոզմունքում, որ ակադեմիական գիտությունը առանց թարմ ուժերի, սերնդափոխության, դինամիկ ընթացք ունեցող գիտական դպրոցների դատապարտված է, իսկ համալսարանական երիտասարդ ներուժի ներթափանցմամբ նոր զարգացման հնարավորություն է ստանում:

Մյուս կողմից, մեզ համար կարճես սովորական է դարձել, երբ ակադեմիական գիտության մեջ որոշակի վաստակ ունեցող գիտնականը մտահոգված չէ սեփական գիտական դպրոց ստեղծելու, հետնորդներ պատրաստելու խնդրով: Համոզված եմ, երկրում լիարժեք գիտական դպրոցներ ստեղծելու ամենաարդյունավետ և հեռանկարային ճանապարհը հենց ակադեմիական և համալսարանական գիտության ինտեգրումն է:

Ես շնորհակալ եմ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Մոլեկուլյար կենսաբանության Ինստիտուտի տնօրեն Աննա Սուրենի Բոյաջյանին, Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Արամ Վարդգեսի Պապոյանին, ինչպես նաև Երևանի Կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Մհեր Վարդկեսի Մարկոսյանին՝ մեր այս նախաձեռնությունը պաշտպանելու և իրագործելու համար: Ինչպես տեսնում եք, այստեղ ևս խոսքը գնում է բնագիտական ուղղությունների մասին:

Հաջորդ շրջադարձային որոշումը մենք կայացրեցինք 2011-2012 թվականներին, երբ որոշեցինք խմբավորել մեր կրթական և գիտական ուղղությունները բավականաչափ ինքնուրույն գործող նոր

կազմակերպա-կառավարման ձևի՝ Ինստիտուտների մեջ, դրանով իսկ ապահովելով տարբեր գիտությունների ներդաշնակության, ներթափանցման, ընդլայնման և նոր հնարավորությունների դաշտ, որի բարերար ազդեցությունը մեր գիտական առաջընթացում արդեն իսկ նկատելի է. Համալսարանի առաջատար ուղղություններից են աստիճանաբար դառնում բիո- և նանո-տեխնոլոգիաների համադրմամբ նոր նյութերի ստացումը, միջազգային իրավունքը միջազգային հարաբերություններում, տուրիզմի, դեղերի շրջանառության կառավարումը, մաթեմաթիկական մոդելների կիրառումը տնտեսագիտական, քաղաքագիտական, հասարակագիտական դաշտում, երկրագիտությունը, որը ներառում է չինարենից ու ճապոներենից մինչև վրացերեն ու պարսկերեն լեզուների վրա հիմնված, բայցև տնտեսագիտական ու աշխարհաքաղաքական հետազոտություններով առավելագույնս հագեցած ուսումնառություն:

Այստեղ ևս թերահավատներ շատ կային, և նորից մեզանից պահանջվեց ապագայի հստակ տեսլական ու հետևողական թիմային աշխատանք՝ այս ամենը իրագործելու համար: Մենք այս օրինակով առաջիններից էինք ռուսական կրթական դաշտում և մինչև այժմ միակն ենք Հայաստանյան դաշտում:

Եվ երրորդ որոշումը, որը մենք ընդունեցինք տակավին վերջերս. Դա տեխնիկական և բնագիտական ուղղություններում ռուսաստանյան առաջատար համալսարանների հետ համատեղ մագիստրոսական կրթական ծրագրերի հիմնումն է: Առաջիկայում հանրությանը կներկայացվեն տեխնիկական, ինժեներական և տեխնոլոգիական ոլորտի ռուսաստանյան առաջավոր համալսարանների հետ մեր համատեղ մագիստրոսական ծրագրերը՝ երկակի դիպլոմների տրամադրման հեռանկարով: Խոսքը գնում է Հայաստանի համար անգամ խորհրդային տարիների համատեքստում չտեսնված և անհասանելի մի նոր հնարավորության մասին, որը ներառելու է այնպիսի մասնագիտությունների ցանկ, ինչպիսին են, օրինակ, նաֆթաքիմիան, միջուկային էներգետիկան, ջերմային ֆիզիկան, նյութաբանությունը, լույսադիոդային տեխնոլոգիաները, կենսատեխնոլոգիաները:

Համագործակցությունը նախատեսվում է այս ուղղությունների համաշխարհային առաջատարների շարքում գտնվող այնպիսի համալսարանների հետ, ինչպիսիք են մոսկովյան հանրահայտ ֆիզտեխը, Պոդպատի և Չուլվաձքների Ինստիտուտը, Բաումանի անվան

Տեխնիկական համալսարանը, Նաֆթի և Գազի Գուբկինի անվան Ինստիտուտը, Սանկտ-Պետերբուրգի պոլիտեխնիկը, Ինֆորմացիոն տեխնոլոգիաների, Մեխանիկայի և Օպտիկայի Սանկտ-Պետերբուրգի ազգային հետազոտական համալսարանը:

Ըստ էության, խոսքը գնում է Հայաստանյան կրթական համակարգի համար աննախադեպ մի գործողության մասին, որը ի գորու է լինելու ըստ հիմնովին փոխել այդ ոլորտներում կադրերի պատրաստման ամբողջ գաղափարախոսությունը, ընդլայնել հնարավորությունների դաշտը, Հայաստանյան երիտասարդության համար բացել մինչև այժմ նախադեպը չունեցող դռներ դեպի լուրջ Գիտություն, օգտագործելով ամենաառաջավոր լաբորատոր սարքավորումները և օգտվելով ամենավերջին գիտական նորույթներից:

Այս լայնածավալ Ծրագիրը այժմ նոր է մեկնարկել, Ռուսաստանի Դաշնության կառավարության հզոր օժանդակությամբ, ընթանում են շահագրգիռ բանակցություններ մեր ռուսաստանյան գործընկերների հետ, որոնց արդյունքում կասկած չունեմ, մենք հանգելու ենք լրջագույն որոշումների, և մեր երկրի համար ստեղծելու ենք չտեսնված հնարավորություններ: Այս հարցում ակնկալում ենք Երևանի Պետական համալսարանի, Ինժեներական համալսարանի, Գյումրու, Վանաձորի մեր գործընկերների շահագրգիռ մասնակցությունը:

Կարծում եմ նաև, որ ժամանակն է արդեն քննարկել և իրագործել համատեղ կրթական ծրագրեր՝ Հայաստանյան համալսարանների մասնակցությամբ, երկրի ներսում միջհամալսարանական համագործակցությանը գերակայություն տալով: Ներկայացվող ծրագիրը լավագույն առիթն է անդրադառնալու այդ, դեռևս չբացահայտված ներուժին:

Երևանի Պետական համալսարանի 95-ամյակին նվիրված տոնակատարության ժամանակ ես հնչեցրեցի մեր Գիտխորհրդի որոշումը՝ գիտխորհուրդում մեկ մշտական տեղ ԵՊՀ ռեկտորին հատկացնելու մասին: Երկու օրից կայանալիք համալսարանական մեր Ընդհանուր ժողովում մենք կամրագրենք այդ որոշումը, որը կարծում եմ, հիմնարար քայլը կլինի միջհամալսարանական մեր համագործակցությունը նոր մակարդակի բարձրացնելու գործում:

Այժմ խոսեմ համալսարանական Մշակույթի մասին, որի կերտման մեջ այս տարիների ընթացքում մենք կարողացանք ներմուծել մեր ուրույն երանգները և սկզբունքները, որոնք, կասկած չունեմ, շատ մոտ ապագայում դառնալու են համատարած: Բերեմ դրանցից չորսը:

Առաջինը՝ Բազմալեզվականությունն է, որին մենք տալիս ենք բացառիկ առաջնահերթություն: Տարրական ճշմարտություն է. Բազմալեզվական, բազմամշակութային մթնոլորտը առավել նպաստող է երիտասարդ մարդու քաղաքակիրթ դաստիարակման և ժամանակակից աշխարհին անմիջականորեն հաղորդակցվելու համար:

Անկախության տարիներին մենք անմիտ կերպով, շռայլորեն կորցրեցինք երկլեզվական լինելու մեր մրցակցային առավելությունը, վերածվելով առավելապես միալեզու հասարակության: Այնինչ մեզ նման, շրջափակման մեջ գտնվող, տարածաշրջանային հակասությունների ու հակամարտությունների կիզակետում հայտնված, միջազգային ինտեգրման հրատապ կարիք ունեցող երկրի համար դա սխալմունք է, եթե չասեմ՝ հանցագործություն: Ամենահեռատես երկրներում, որոնց թվում, ի դեպ, օրինակ, Ղազախստանն է, պետական մակարդակով խնդիր է դրված ձևավորել ԵՌԱԼԵԶՈՒ հասարակություն:

Ըստ որում, խոսքը գնում է օտար լեզուներին և մշակույթին ԿԱՏԱՐՅԱԼ տիրապետման մասին՝ այնպիսի տիրապետման, որը թույլ կտա հակառակորդ թե գործընկեր երկրի դաշտում, իրենց խաղի կանոններով, իրենց լեզվով, պատկերավոր ասած, խաղալ և հաղթել: Սկզբնավորման առաջին իսկ օրվանից, ռուսերեն իրականացվող ակադեմիական դասընթացներին գուգահեռ մենք ձևավորեցինք երկրում լավագույնների շարքում գտնվող հայագիտության ամբիոնը, որի ջանքերի շնորհիվ մեզ հաջողվեց ոչ միայն հայոց լեզուն և մշակույթը դարձնել համալսարանական գերակայություններից մեկը, այլև մայրենի լեզվին ու մշակույթին հաղորդակից դարձնել հայկական ռոուսալեզու սփյուռքի արդեն իսկ բազմահազար ուսանողների:

Դրա հետ մեկտեղ, իհարկե, մեծագույն ուշադրություն ենք դարձրել նաև եվրոպական առնվազն մեկ լեզվի տիրապետման խնդրին: Այսինքն, մեր առջև դրել և ի դեմս մեր լավագույն շրջանավարտների իրագործում ենք եռալեզու հասարակության ստեղծման մեր համալսարանական առաքելությունը: Ընդհանրապես կարծում եմ, որ որպես պետական չափորոշիչ պիտի սահմանվի. Հայաստանում համալսարանական

կրթություն ունեցող յուրաքանչյուր ոք պարտավոր է տիրապետել առնվազն երեք լեզուների:

Հաջորդ համալսարանական արժեքը Համահայկականությունն է, որին մեզ մասամբ՝ թեկուզև ռուսալեզու հայ համայնքի կոնտեքստում հաջողվել է հասնել: Հայաստանում ռուսալեզու առաջադեմ համալսարանի առկայությունը չափազանց կարևոր գործոն է արտասահմանում բնակվող մեր բազմաթիվ հայրենակիցների համար: Հայ-Ռուսական համալսարանը այս տարիների ընթացքում, ըստ էության, մեր պետության մեջ միակ օղակն էր, որ կազմակերպված կերպով նպաստում էր մասսայական հայրենադարձությանը:

Վիճակագրությունը հետևյալն է. Այլ երկրների անձնագրեր ունեցող մեր հայ շրջանավարտների 80%-ը գերադասել է մնալ և գործունեություն ծավալել Հայաստանում՝ դիմելով և ստանալով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Անկեղծ ասած, այս ցուցանիշը ինձ համար յուրահատուկ պարծանքի առարկա է: Միննույն ժամանակ համարում եմ, որ մեր լավագույն կրթոջախները կարող են իրենց հերթին նման՝ դեպի հայրենիք, կամուրջ հանդիսանալ մեր աշխարհասփյուռ գաղթօջախներում ապրող հայ երիտասարդության համար, առաջարկելով բարձրակարգ ուսուցում անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, արաբերեն և այլ լեզուներով:

Ի վերջո, ամեն անգամ կրթության գերակայության մասին կառավարական շեշտադրումները պետք է հանգեն կոնկրետ գործողությունների. Մեր համալսարանները պետք է դառնան համահայկական:

Երրորդ արժեքը Միջազգայնությունն է, կրթական բաց համակարգի ձևավորումը, միջազգային կրթական և գիտական համակարգերին առավելագույնս ինտեգրումը: Հայաստանում այսօր ստեղծված են դրա համար բացառիկ հնարավորություններ, որոնցից դեռևս, իմ համոզմամբ, մենք ոչ բավարար չափով ենք օգտվում: Բոլոնիայի գործընթացին մեր ակտիվ մասնակցությունը, Եվրոպական լավագույն համալսարաններում մեր ուսանողների համար ուսումնական կրեդիտներ հավաքելու շանսի լայնածավալ օգտագործումը կբերեն մեր կրթական համակարգը գավառականությունից վերջնականապես ազատագրման արդյունքին:

Դա կստացվի ինքնաբերաբար, քանի որ այլ երկրում ուսումնառության փորձ ունեցող ուսանողը անխտիր կերպով բարձրացնելու է պահանջը Հայաստանյան համալսարանի կողմից առաջարկվող ուսումնական ծրագրերի նկատմամբ:

Եվ չորրորդը՝ ցանկացած ուսանողի կրթության հետագիծը գծելիս համալսարանների փոխլրացման սկզբունքն է: Հայտնի է, զարգացած կրթական համակարգեր ունեցող երկրների փորձը, համաձայն որի չգրված պահանջ գոյություն ունի. բակալավրի կրթական աստիճան ունեցող շրջանավարտը մագիստրոսի աստիճան պետք է ձեռք բերի այլ համալսարանում՝ դրանով իսկ անաչառ քննության ենթարկվելու իր պատրաստակամությունը դրսևորելով: Այս դրույթով է ղեկավարվում նաև բարձրակարգ մասնագետների աշխատանքի շուկան. Առավելություն են ստանում բազմահամալսարանական կրթություն ունեցող մասնագետները:

Այսօր մենք երևի թե միակն ենք Հայաստանյան համալսարանական դաշտում, որ չենք կառճում մեր բակալավրիատի շրջանավարտներից՝ սեփական վճարովի մագիստրատուրան համալրելու նպատակով, այլ անգամ խրախուսում ենք նրանց կողմից ուսման շարունակումը այլ համալսարաններում: Ճիշտ է, մինչև այժմ արձանագրված դեպքերը բացառապես վերաբերում են Հայաստանի Ամերիկյան համալսարանին, ինչը արտացոլում է գոյություն ունեցող նախապատվությունների պատկերը, բայց մենք բաց ենք և ազատ՝ Հայաստանյան ցանկացած այլ համալսարանի առաջարկը բավարարելու հարցում:

Նույնը կարող եմ ասել մեր կողմից իրականացվող ընդունելության քաղաքականության մասին. Հայ-Ռուսական համալսարանի ասպիրանտուրայի պետպատվերի տեղերի ցանկացած հավակնորդ ի սկզբանե գիտի, որ ընտրությունը կատարվելու է բացառապես արդար մրցակցության արդյունքում՝ անկախ այն հանգամանքից, թե որ բուհի գիտական դպրոցն է ներկայացնում: Սեփական շրջանավարտներին մենք a priori առաջնայնություն չենք տալիս, և արդյունքում Հայաստանյան միակ համալսարանն ենք, որի պետպատվերով ասպիրանտական տեղերի մինչև քսան տոկոսը բաժին է ընկնում այլ համալսարանների շրջանավարտներին:

Այս սկզբունքները՝ մեր անառարկելի արժեքների՝ ակադեմիական ազատության, արդարության, ուսանողի շահերի գերակայության,



ապաքաղաքական և ապաքարոզչական լինելու, կոռուպցիոն դրսևորումներից իսպառ զերծ մնալու հետ միասին կազմել են մեր տասնհինգամյա հաջողությունների բանալին: Հետագայում ևս ղեկավարվելու ենք միայն դրանցով:

Մրանով կարելի էր թերևս ավարտել իմ այսօրվա ելույթը, սակայն կարծում եմ, ներկաները ինձ չեն ների, եթե գոնե մի փոքր անդրադարձ չկատարեմ աշխարհաքաղաքական վերջին զարգացումներին և Հայաստանին սպասվող նոր փորձություններին և մարտահրավերներին:

Եվրասիական Տնտեսական Միությանը մեր անդամակցության և Ռուսաստանի նկատմամբ իրականացվող պատժամիջոցների ազդեցության մասին: Արդեն առիթ ունեցել եմ մամուլում ներկայացնելու իմ տեսակետը այս առնչությամբ. մեր ընտրությունը, իմ համոզմամբ, պայմանավորված էր ոչ այնքան, կամ գոնե ոչ միայն անվտանգության նկատառումներով, ինչպես հիմնականում ներկայացվում է, այլ արդյունք էր մեր ինքնանույնականացման՝ իդենտիֆիկացիայի: Քրիստոնեական և Եվրոպական արժեքներ կրող, սակայն միևնույն ժամանակ Արևելյան մշակույթի անբաժանելի մաս հանդիսացող Հայաստանը կատարել է բնական ընտրություն:

Հայաստանի համար այսօր, իմ կարծիքով, խիստ շահեկան է Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների ֆոնին ռուս-իրանական և անգամ ռուս-թուրքական կապերի աշխուժացումը: Մասնավորապես, մեր այդ երկու հարևան երկրներում ռուսական տեխնոլոգիաների հիման վրա ատոմակայանների կառուցման հեռանկարը՝ իմ ելույթում ներկայացված համապատասխան գիտական ուղղությունների զարգացման պարագայում կարող է մեծապես ուժեղացնել մեր մասնագիտական ներգրավվածությունը, ինչպես նաև կադրերի պատրաստման գործում մեր հնարավոր դերակատարումը:

Բացարձակապես չեմ կիսում Հայաստանյան վերլուծաբանների վերջին օրերին հնչեցրած խուճապային տազնապները՝ Ռուսաստանի Դաշնության Նախագահի՝ Թուրքիա կատարած այցի առնչությամբ: Հակառակը՝ կարծում եմ, որ մենք մեր շանսը այստեղ որսալու և օգտագործելու հնարավորություն ունենք: Ի վերջո, Թուրքիայի հետ մեր հիմնական՝ Ցեղասպանության ճանաչման և դրա հետ կապված պատասխանատվության հարցում Ռուսաստանը մեր հիմնական դաշնակիցներից է, իսկ ռուսական հատուկ շահերի առկայությունը

Թուրքիայում, պատմական այս հանգրվանում, կարող է նաև շահեկան լինել Հայաստանի համար:

Նույնը վերաբերում է նաև Իրանի հետ Ռուսաստանի կողմից վերջերս կնքված նաֆթ՝ ապրանքի դիմաց գործարքին, որի լիարժեք մասնակից կարող է լինել նաև Հայաստանը: Հայաստանն էլ, իր հերթին, կարող է բավական օգտակար լինել Ռուսաստանի համար՝ Վրաստանի հետ խաթարված հարաբերությունների կարգավորման հարցում, այդ թվում տնտեսական մեխանիզմները օգտագործելով, ուղղակի այս ամենով զբաղվել է պետք. Իհարկե, մեր անգործության պարագայում ոչ մի առավելություն էլ չենք ստանա:

Ինչ վերաբերում է վերջին օրերին արժույթային շուկայում արձանագրված խուճապին, ապա այստեղ ևս ամեն ինչ բացատրելի է. դրամի արժեզրկումը որևէ ուղղակի կապ չունի Եվրասիական Տնտեսական Միությանը մեր անդամակցության որոշման հետ: Այն կապված է բացառապես արտաքին (հիմնականում ռուսաստանյան) մասնավոր դրամական տրանսֆերտներով արհեստական պահանջարկի խրախուսման վրա հիմնված տնտեսական մոդելի հետ, որը, ցավոք սրտի, կիրառվում է մեզանում արդեն բավական վաղուց: Բնական է, որ ռուսական ռուբլու անկումը պետք է բերեր և դեռ բերելու է դրամի համապատասխան արժեզրկման:

Ակնհայտորեն, մեր տնտեսական մոդելը հիմնովին փոխելու անհրաժեշտություն կա, բայց դրա համար անհրաժեշտ կլինեն բավական ցավոտ համակարգային լուծումներ: Բայցևայնպես, Ռուսաստանի տնտեսության արդեն պաշտոնապես հայտարարված և սպասվող անկումը ոչ անպայման կարող է բերել Հայաստանի տնտեսության անկման: Ինտեգրման նշված, նաև բազմաթիվ այլ հնարավորությունները օգտագործելով, շատ հավանական է որ հասնենք անգամ տնտեսության առաջանցիկ աճի: Բայց դրա համար, ինչպես արդեն ասվեց վերևում, աշխատել է պետք:

Այս օպտիմիստական կանխատեսումով թույլ տվեք ավարտել իմ ելույթը այսօրվա գիտաժողովում:

Շնորհակալություն ուշադրության համար: